«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ --3-գ-- ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հարությունյան Մարգարիտա Անդրանիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023– 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

Աշակերտները ուսումնական տարին սկսեցին մեծ պատրաստակամությամբ: Դասարանը համալրվել է մեկ աշակերտով: Այժմ դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 17 աղջիկ և 8 տղա: Դասարանում տիրում է համերաշխ, ընկերական մթնոլորտ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

1 .Հայեցի դաստիարակություն.

Աշակերտի գիտակցությանը հասցնել իր սոցիալական դիրքորոշումը: Ձևավորել սեր ոչ միայն հայրենիքի նկատմամբ, այլ նաև՝ հայրենիքում ապրող ժողովրդի: Դաստիարակել հոգատար վերաբերմունք շրջապատի, հայրենիքի պատմության, մշակույթի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Ծանոթացնել հարազատ վայրերին, հայկական բնաշխարհին: Ամրապնդել գիտելիքները Հայաստանի խորհրդանիշներով:

2. Հոգևոր դաստիարակություն.

Գիտակցել ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա լինելը: Ծանոթացնել քրիստոնեական տոներին և նրանց խորհրդին: Աշակերտի մեջ ձևավորել բարոյական անձ իր առաքինի որակներով: Խոսել տարբեր մարդկանց, հերոսների բարոյական վարքի մասին, որոնք կրում են հոգևոր բնույթ:

3.Գեղագիտական դաստիարակություն.

Ձևավորել սովորողի գեղագիտական ընկալումները: Օգնել աշակերտին զգալ և գնահատել գեղեցիկը: Կարողանալ ըմբռնել յուրաքանչյուր բնագավառի յուրահատկությունը՝ տեսնել գույների բազմազանությունը, նկատել շրջապատող առարկաների, երևույթների, գործընթացների գեղեցկությունները, ձևավորել ստեղծագործական հետաքրքրություններ:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Ռազմա-հայրենասիրական դաստիարակության համար կարևորել հայերի պատերազմական գործունեությունները և հաղթանակների մասին զրույցները: Ծանոթացնել մեծ հայրենասերների, ֆիդայիների, ռազմական գործիչների կյանքին: Խոսել Դրոյի, Նժդեհի, Մոնթեի ապրած կյանքի և գործունեության մասին:

5.Ֆիզիկական դաստիարակություն.

Կարևորել վարեոլոգիական նորմերը, դասի ժամանակ թարմացնող վարժությունները դարձնել նաև առողջապահական նորմերին համապատասխան՝ կատարել աչքերի վարժություններ, մատների վարժություններ, ընդհանուր մկանային համակարգին նպաստող վարժություններ, ինչպես նաև կազմակերպել զբոսանքներ բնության գրկում:

6.Աշխատանքային դաստիարակություն.

Յուրաքանչյուր աշակերտի մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը: Հասնել այն բանին, որ նրանց աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի: Սովորողին ընտելացնել աշխատանքի և հասնել գիտակցական կարգապահության: Ձևավորել հարգանք ուրիշների աշխատանքի նկատմամբ: Օգնել խնայողաբար ծախսել նյութական ռեսուրսները: Այս ամենով աշակերտի գիտակցությանը հասցնել այն, թե ինչ միջոցներով և ինչ ուժերով են ստեղծվում մարդուն անհրաժեշտ բոլոր արժեքները: Ձևավորել պատասխանատվություն տնային աշխատանքները կատարելու գործում:

7.Բնապահպանական դաստիարակություն.

Աշակերտների գիտակցությանը հասցնել բնության կարևորությունը և կենսական նշանակությունը մարդու կյանքում: Զինել գիտելիքներով բնության և հասարակության կապի, բնության գոյության անհրաժեշտության մասին: Ծանոթացնել բնությանը վերաբերվելու նորմերին, դաստիարակել հոգատարություն և խնամք սենյակային բույսերի նկատմամբ :

8.Դպրոց-ընտանիք կապը.

Ծնողներին ծանոթացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, բացատրել երկրորդ դասարանի ուսումնական պահանջները, ցուցաբերել մեթոդական օգնություն, ծնողին հաղորդակից դարձնել իր երեխայի ուսումնական գործընթացին, կազմակերպել ծնողավարման սեմինար « Համակարգչի վնասներն ու օգուտները երեխայի կյանքում» թեմայով:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	Գիտելիքի օր	
II	Իմ ընտանիքը	
III	Ընկերություն	
IV	Անկախության օր	
V	Ով եմ ես	
VI	Ինչպես պաշտպանվել վարակներից	
VII	Հիգիենա	
VIII	Տարերային և բնական աղետներ	
IX	Ինչ է իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության օր	
X	Իրավունքներ և պարտականություններ	
XI	Առողջ ապրելակերպ	
XII	Հանդիպում հոգեբանի հետ	
XIII	Երթևեկության կանոններ	
XIV	Սպիտակի երկրաշարժ	
XV	Ամանոր և Սուրբ Ծնունդ	
XVI	Հայոց բանակ	
XVII	Քրիստոնեություն: Եկեղեցական տոներ	
XVIII	Տեառնընդառաջ	
XIX	Գրքի դերը մարդու կյանքում	
XX	Կոնֆլիկտ: Ինչպես խուսափել կոնֆլիկտներից	
XXI	Ինչ է քաղպաշտպանությունը	
XXII	Կանանց միջազգային տոն	
XXIII	ՄԻմյանց հետ շփման և վարվեցողության կանոններ	
XXIV	Հանդուրժողականություն: Ինչու պետք է հանդուրժեմ	
XXV	Ծիծաղի և հումորի օր	
XXVI	Ս. Հարություն կամ Ս. Զատիկ	
XXVII	Ավետման և մայրության տոն:	
XXVIII	Հայոց Մեծ Եղեռն	

XXIX	Համացանցը մեր կյանքում	
XXX	Հաղթանակի օր	
XXXI	Ընտանիքի դերը երեխայի կյանքում	
XXXII	Հանդիպում հոգեբանի հետ	
XXXIII	Իմ ձեռքբերումներն ուսումնական տարվա ընթացքում	
XXXIV		

Դասղեկ՝ Մ. Հարությունյան